

ԲԱՐՈՅԱՌՕՍԱԿԱՆ

Ա.

ՀԱՅ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Առաւելագէտ բնդհանուր պատերազմէն ի վեր հայ ընտանեկան կեանքը քայքայման տխուր պատկեր մը կը ներկայացընէ մեծ չափով Հայաստանի, ո՛չ նուազ հասկածելի համեմատութեամբ արտասահմանի մէջ:

Եւր ապրելու արդի պայմաններուն մէջ Նուազ չէ թիւը այն երիտասարդներուն եւ օրիորդներուն, որոնք իրենց օգնական համ ընկեր ընտրելու գործին մէջ, ո՛չ ազգի լիզոթիւնը կ'ընեն, ո՛չ պահանջուած հանգամանքները կը փնտռեն, ո՛չ ալ ընտանիք կազմելու զիտակցութիւնը եւ զայն ապրելնելու մտահոգութիւնը կ'ունենան. իսկ անանոն առհասարակ սիրահարութեան եւ քրեան տարին չբոլորած կամ սիրտը կը չքննէ կամ կը զիմեն դատաստանողան խորհուրդին:

Գծախոսութիւն է տեսնել թէ հին ամբարձ օմանք իրարու հետ 10, 15, 20 տարիներ կենակցելով հանգերձ՝ կը վարահուին նոր սերունդի մէջ ճարակած այս հիւանդութիւնէն:

Գաւերու բնութիւնը մեծ մասով նիւթական անձկութեան, առաւելագէտ բարքերու անհամաձայնութեան, մէկ կամ միւս կողմի բարոյական գայթուսին հետեւանք է:

Գիմումներու յուսացուած ելքը չարքուած կամ այլ ու կնոջ միջեւ հաշտութիւն չգոյացած պարագային՝ դործին հետեւանքը, բարոյական տեսակէտով ծանրակշիւ կը դառնայ: Եկեղեցոյ հեղինակութիւնը օմանց համար արժէք չի ներկայացներ: Կան այնպիսիներ ալ որոնք բաւարարութիւն չտեսցած միջոցին՝ կը զիմեն օտար եկեղեցի: Այս վերջի պարագան պուլկարահայութեան մէջ ստեղծուած առաջնորդական տապնապի ծնունդն է:

Ահա այսպէս կը քայքայուի հայ ընտանեկան կեանքը որ մեր դոյութեան տեսակէտով, դարերու ուժգին մըրիկներու զիմագրաւող ամէնէն զօրաւոր ամբութիւններէն մին եղած է իր սրբանուէր օծութիւնով եւ հայրենանուէր բարքերով:

Այդ օրինակ անձերու մօտ՝ ամուսնութեան հին, բարի օրերու սրբազան դրոմը եղծուած է. այլ ու կնոջ միջեւ անոնց խանդաղատանքի եւ քաղցր յիշատակներու ծաղիկներով հիւսուած շղթայ մը դանոնք այլ եւ իրարու հետ չի կապեր: Թախծալից տրամադրութիւն մը, զիրար դատելուն մէջ անհանգուրժելի ընթացք մը, անարդար կասկածամտութիւն մը, գծուծ վերաբերմունք մը կը քանդեն մեր ընտանեկան յարկերը: Մինչդեռ անդին կը տեսնենք հին սերունդին պատկանող երջանիկ ամուսնի, որոնց երիտասարդութիւնն ու գեղը խամբած, ներքին հուրքը մարած ըլլալով հանգերձ՝ իրարու հանդէպ սէր, զորով եւ յարգանք կը տածեն, վասն զի իրենց հոգիին մէջ բուռն է սէրը, որ երբեք թառամիլ չի գիտեր: Անոնք տակաւին Աստուծոյ պատուէրները կը պահեն, հասարակաց կարծիքէն կը չեկնին, ընտանեկան խաղաղութիւնն ու սրբութիւնը իրենց համար անձեռնմխելի բան մը ունի:

Պատմութեան անհրաքելի մէկ փաստն է թէ հայը իր բնադաւաւին մէջ միայն կարողացեր է պահել իր հայրենի բարքերը, սովորութիւններն ու սրբազան աւանդութիւնները՝ հակառակ երկրին մէջ տիրող հալածանքին եւ զժոխային պայմաններուն: Նուազ չէր թիւը Քղիի, Խարբերգի, Մուշի, Բալուի, Եւայի, այն երիտասարդութեան որ տիրող տնտեսական եւ քաղաքական տագնապներու հետեւանքով քաշուած էր արտասահման: Գաւառացի հայ կիներ առհասարակ ժուժկալութեան եւ համբերատարութեան զմայելի օրինակ կը հանդիսանար աւելի քաղաքակիրթ կեդրոններու մէջ ապրող իր քոյրերուն, հակառակ իր կրած ֆիզիքական եւ շատ անգամներ, ամէն կարգի զրկանքներուն: Իսկ այսօր... այսօր հայ տարագիր երիտասարդներէ եւ օրիորդներէ կարեւոր մաս մը կորսնցուցած են իրենց երիտասարդական առաքնութիւններն ու հայրենի մաքուր բարքերը: Ամուսնութեան մէջ բարոյական զգացում, կրօնական հաւատք, անայլալ սէր տեսնել անոնց համար անհնարին իմացք մըն է: Տիրապետող զգացումը առաւելագէտ զգայական զրգիւնն է, երբեմն ալ անիրաւ մամոնան:

Աւելորդ է բոկ թէ՛ ամուսնական այս

վէճերը, որոնք ընդհանրապէս ի յայտ կու գան զազմականներու նոր սերունդին մէջ, արդիւնք են խորունկ աշխատութիւն և բարոյական անկումի, որ իր կարգին արդիւնք է տասնեակի տարուան երկար տառապանքներու, ընդհանուր պատերազմէն շնոր ընկերութիւնը վերվայր չընող ըմբռնումներու և միմեկորտը լեցնող վատաւորջ զաղափարներու հոսանքին:

Կա՛յ ուրիշ ցաւալի պատճառ մըն ա՛յ զոր պէտք չէ ծածկել:

Արդի երիտասարդութիւնը իր փոքր հասակին մէջ տարադրուեցաւ անսպասանբար: Աղէտէն վերապրողները հազիւ իրենց ծնողափայրին մէջ տեղաւորուած, զրեթէ երկու տարի յետոյ, հարկադրուեցան կրկին տեղահանուիլ: Ան, մեծ մասով, մնաց առանց ուսումի, դատարարականութեան և արհեստի: Երիտասարդները զինուորագրուեցան Հայկ. Լէգէոնին, Անդրանիկի և յունական բանակներուն մէջ: Զինուորական կեանքը ալ աւելի խաթարեց անոնց նկարագիրը: Յունաստանի մասնաւորապէս Սիւանիկի և իր շրջանակներուն մէջ տկնարկուած նոր սերունդին թիւը կը հասնէր զրեթէ չորս հազարի: Շատեր չէին ուզեր ճակատ քրտնքով հաց ճարել: Խմել, խաղալ, կողոպտել՝ իրենց միակ առաքինութիւններն էին. կարծես ծնած էին սոսկ կոռուելու համար. ինչպէս և ինչո՞վ կ'ապրէին: Առայժմ ներքի չէ ա՛յդ պարագաները հոս պարզել:

Ո՛չ նուազ աղճատուած է նաեւ մեր չափահաս ազնիւներու նկարագիրը իսլամական հարէմներու մէջ: Անոնք իրենց մանկական անգիտակից տարիքին մէջ տեսան և իրենց անձին վրայ կրեցին այնպիսի լրբութիւններ, որոնց երբեք պիտի չնթարկուէին իրենց հայրենի երգիքին տակ: Հանգուցեալ Տօքթ. Մ. Ճէփահրեհանի յանձնարարուած էր Երուսաղէմատան հարիւր որբուհիները քննել: Բժիշկը սոսկումով ու դողդոջուն վիճակի մէջ եկաւ յայտնելու թէ որբուհիներուն ⁹/₁₀ 75ը, նոյն իսկ վեց տարեկանը, սրբազգծուած էին:

* * *

Նուազ չէ նաեւ թիւը այնպիսիներուն, որոնցմէ չատեր ընկերական նախանձնի

զիրքի տիրացած և զեղեցիկ բախտ մը չինած ըլլալով հանդերձ՝ ամուրի մնալը իրենց կեանքի կանոն շինած են:

Այդ որոշումը անշուշտ բարոյական կեանք մը ցոյց պիտի տար՝ եթէ իրեն առարկայ ունենար Աստուծոյ նուիրուելու, հանրութեան օգտակար ծառայութիւն մը մատուցանելու առաջադրութիւնը և հիւանդկախ վիճակը՝ որոնք կրնան չհաշտուիլ ամուսնական կեանքին հետ: Իսկ երբ ան իրեն պատճառ ունի միայն անձնասիրութիւնը, ուրիշներու հաշուոյն չաշխատելու տրամադրութիւնը, ընտանեկան կեանքի հոգերէն և պարտականութիւններէն խուսափումը, և զեղեցիկին ու մեղ հաճոյքի պաշտամունքը միայն, արգա՛ր է որ ձաղկուի:

Ամուրին հայրենիքին և ազգին հանդէպ պարտապանց մըն է: Իր հաճոյքները պիտի գնէ ոսկիով առանց անկեղծօրէն սիրելու և սիրուելու:

Իր մեղապարտ կեանքին խայթող ծանրութիւնը պիտի կրէ խղճմտանքին վրայ՝ եթէ իր մէջ չեն մեռած տակաւին կրօնական և բարոյական արժէքները:

Երիտասարդական կորոյին և խանդին մէջ ամուրի կեանքին անպատահելութիւնները գուցէ ա՛յնքան զգալի չըլլան, բայց ի վերջոյ կուգան ծերութիւնն ու առանձնութիւնը:

Ամուրիին կը պակսի զինքն անկեղծօրէն սիրող սիրտ մը, որուն վրայ հանգչեցնէ իր գլուխը, որուն վստահի իր զաղանքներն և բողձանքները, պատմէ ցաւերն և ուրախութիւնները: Չունի ոչ ոք որ իր անունը կրէ, իր զործը շարունակէ, հոգեվարքի զերագոյն վայրկեանին զինքն սփոփէ, աչքերը փակէ, և քանի մը կաթիլ արցունք թափէ անոր սնարին վրայ:

Գոհացուցիչ ո՛չ մէկ փոխարինութիւն, ո՛չ մէկ վարձատրութիւն չունի ամուրին ընտանեկան հոգերէ զերծ մնալու մատուցանելուն մէջ: Կեանքը ոչ ոքի չի խնայեր իր հարուածը: Տառապանքը կեանքի օրէնքն ըլլալէ աւելի անոր պայմանն իսկ է:

Ֆիլիպպի

ԵՐՈՒԱՆԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ